

պատի տաճարը, պատած էին Ս. Քառասուն Մանկունի գերեզմանատունը, չէնցնել կ'ուզէին հուներկրտուր վաճը, որուն 3 կտոր արտ գնած էին, եւ այլն: Ասոնք ամէնը ստակով յառաջ կու գար եւ ժողովուրդն ալ յօժարութեամբ կու տար այսպիսի նեղ տարի մը» (Գարեգին Վ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար. Ա. Կ. Պ. 1879, էջ 149): Ընդգրծուածները ունեցած են իրենց յատուկ Ընկերութիւնը:

13. ԵՈՒՆԵՐԿԸՏՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1868-70)

Սրուանձտեանցի վերի յաշտակութեան էն լոկ կ'իմանանք թէ գոյութիւն ունեցած է այսպիսի Ընկերութիւն մը, որուն մասին գտած չենք ուրիշ ծանօթութիւն մը եւ չենք կրնար ճշգրէ հիմնումի թուականը: Կը տեսնուի որ միեւնոյն ժամանակաշրջանի մը մէջ երեւան եկած են այս վերոյիշեալ Ընկերութիւնները, որոնցմէ ոմանք Հայ Մամուլի մէջ ալ յիշատակութիւն կը գտնեն: 1878ին Ընկերութիւնը «3 կտոր արտ գնած է վանքին համար եւ միտք ունէր «չէնցնել» վանքը (Թորոս Աղբար, անդ):

14. ... ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1868-70)

1871 Հոկտ. 9ին Մկրտիչ Արքեպ. Խրիմեան, Պատրիարք Կ. Պոլսոյ, կը գրէ. «... Այսու վաւերագրովս յայտ առնեմք, զի Սեբաստիոյ կէս ժամու ճանապարհաւ կից գտնուած յանուն Քառասնից Մանկանց նուիրեալ գերեզմանատնից շրջապատով գոցելու եւ նոյն սրբավայրը, ուր յիշեալ Քառասուն նահատակաց նշխարք կը հանգչին, օտարաց ոտից կոխան ըլլալէ ազատելու համար Սեբաստիոյ մէջ կազմեալ ազգային Ընկերութիւն մի բարեպաշտական ոգւով պատ քաշելու ձեռնարկելով, կիսով չափ աւարտած է» (Հայրենիք, Կ. Պ. 1871 թ. 71):

Մեղք որ չի տրուիր անունը այս Ընկերութեան, որ Սեբաստիա քաղաքի մէջ հիմնուած եւ անշուշտ տարրեր է եւ աւելի կանուխ հիմնուած քան յաջորդ «Քառասնից Մանկանց Ընկերութիւն»ը, որ միեւնոյն նպատակով եւ աւելի ուշ՝ Պոլսոյ մէջ կազմուած է:

(Շարունակելի)

Հ. Ե. ՊՈՂՈՍԵԱՆ

ՅԱԿՈԲԱՆ Թ. Խ. ԵՐԵԱՆԻ ՎԱՏԱՆՔԻՆԸ 1801-1879, Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն. Երեւան, 1959, 40, էջ 672:

Հայաստանի եւ մանաւանդ Կովկասի պատմա-բանասիրական եւ գիտական հրատարակութիւնները, դժբախտաբար, արտասահմանի հայութեան շատերուն անմատչելի ըլլալով, ինծի թոյլ կու տամ անոնց վրայ խօսելու եւ գրելու ատեն, լայն տեղ տրամադրել բովանդակութեան:

Ներկայ հատորը ստուգիւ արժէքաւոր մէկ երկն է Թ. Խ. Յակոբեանի, որ իր «Հիւրնակի կողմից» այսպէս կ'արտայայտուի յառաջաբանին մէջ. —

«Մօտ երեք հազարամեայ պատմութիւն ունի մեր սիրելի մայրաքաղաքը Երեւան... XIX դարը Երեւանի պատմութեան ամենաուշագրաւ շրջաններից մէկն է: Այդ դարում նա վերջնականապէս ազատագրուեց պարսկական լծից, փրկուելով թուրք-պարսկական յարատեւ պատերազմների կոռւածաղկի լինելուց եւ պարսկական խաների բռնութիւնից... Ժամանակագրական առումով աշխատութիւնը ընդգրկում է 79 տարի՝ 1801-1879 թուականները... Աշխատութիւնը բաղկացած է երկու բաժնից, որոնց առաջինը ընդգրկում է 1801 - 28 թթ. իսկ երկրորդը 1828 - 1879 թթ.: Իւրաքանչիւ բաժնի տակ իրրեւ առանձին գլուխներ տրուած են քաղաքի վարչական կարգը, տնտեսական կեանքը ըստ ճիւղերի, բնակչութիւնը, քաղաքի նկարագրի, ներքին կեանքն ու կուլտուրան: Դրանցից բացի երկրորդ բաժնում իրրեւ մի առանձին ընդարձակ գլուխ տրուած է պարսկական լծից Երեւանի ազատագրման պատմութիւնը» (էջ 5-6):

Ա. Երեւանը 1801-1828 թթ.:

Երեւանի խանութիւնը պարսկական պետութեան ամենակարեւոր մարզն էր, որ Ժ. Պարի առաջին քառորդին մէջ սահմանակից էր զոյգ պետութիւններու՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի: Ան իր մէջ կ'ընդգրկէր Արեւելեան Հայաստանի հիմնական մասը եւ կենդրոնական դիրք կը զբաղէր բովանդակ Հայաստանի մէջ: Պարագանքն ու համաձայն ունեցած է այլապէս տարածութիւն: «Երեւանի խանութեան տերիտորիան կազմել է մօտ 24,000 քառ. քմ.» եւ վերջին սարգարի

օրով վարչականօրէն բաժնուած էր 15 «մահալների» (անդ էջ 10): Մահալներու այդ մասնահատումը կատարուած է ջրային կամ գետային ցանցի համաձայն: Անոնց կառավարիչները կը նշանակուէին սարգարի կողմէ եւ կը կոչուէին «միրբոլուկներ», իսկ դիւղեւ կը կոչուէին «քեդխուդաներ» կամ «մելիքներ»: Ասոնց պարտք էր խանի կողմէ նշանակուած կողը բաշխել, հարկերու եւ տուրքերու գանձումներու վրայ հսկել, իրենց հպատակները եւ անոնց դոյքերը պաշտպանել յարձակումի եւ թալանի դէմ եւ «իրենց ծառայութեան դիմաց աշխատավարձի փոխարէն սովորաբար ստանում էին այս կամ այն գիւղի կալուածքի իրաւունքը» (էջ 13):

Երեւանի խանութեան բնակչութիւնը կազմուած էր հայերէ, աղբալէյանցիներէ, քրդերէ եւ տաճիկներէ: Պարսիկները քիչ էին. բայց անոնցմէ էին պետական պաշտօնեաները, թիկնապահներն ու զինուորները: 1805-1827 թուականներուն Երեւանի մէջ 1805-1827 թուականներուն Երեւանի մէջ խան եղած են՝ — Մեհմէտ-Ղուլի խան, Ահմադ խան եւ Հիւսէյն Ղազար խան, որ երկուսն ալ սարգարութեան պաշտօնը կը վարէին (1807-1827) եւ կարելի է զինքը անուանել Երեւանի շահ, որովհետեւ այնքան մեծ ու ազատ իշխանութիւններ ունէր, ու հեթաթալին հարստութեան տէր: Սեպհական ընդարձակ կալուածներ ունէր Երեւանի խանութեան եւ պարսկական պետութեան ուրիշ թեմաներում: Երեւանի բերդին մէջ նրա շրջաններում մէջ: Երեւանի բերդին մէջ նրա տած բռնակալն էր բայց եւ շինարար (էջ 14-23): Ունէր իր վէճիւրը եւ միրզաները: Դատական գործերը կենդրոնացուեցած էր մահալների հոգեւորականներու ձեռքերում մէջ. իսկ բանակին կը հրամայէր Հիւսէյն խանի եղբայրը՝ Հասան, որ էր անգուլթ եւ ժողովուրդին պատուհաս: Խանութեան պաշտօնական լեզուն պարսկերէն էր եւ հայերը ստիպուած էին զայն սորվել: Անոր միակ ու գլխաւոր քաղաքն էր Երեւանը, զոր կը կառավարէր Սարգարէն նշանակուած օստիկանապետը (կոչուած՝ դարուղա): Ան ունէր ենթապաշտօնեաներ, հարկաւարներ, տասնապետներ եւ մելիքներ (էջ 23-33):

Երեւանի տնտեսական կեանքն առանձնապատուկ եւ նշանակալից բան չունի: Բնակչութեան կարիքներու եւ տեղւոյ արդատարբութեան համաձայն զարգացած են արհեստներ եւ արուեստներ:

Օճառագործութիւնը, կաշեգործութիւնը, ներկարարութիւնը քաղաքին մօտքի աղբալներն էին, ինչպէս նաեւ ջաղացները սանդերը (դինգերը): Տարածուած արուեստներէն Վերջնականագործութիւնը: Երեւան ունեցած է կարճատեւ ժամանակներում մէջ ապակիի, թղանթի եւ վառօդի գործարաններ (էջ 33-39):

Առուտուրը եւ վաճառականութիւնը թէպէտ Երեւանի խանութեան մէջ սարգարին քով՝ շատ խեղճ գրութիւն մէջ էր, բայց Երեւան քաղաքին մէջ ան զարգանալու մէջ առաւել էր սատրապին ու անոր պաշտօնէութեան շուրջ ապրելակերպին պատճառով: Ամէնէն աչքառու վաճառականներն ու խանութեան ղեկավարներ, որոնց շուկան արար աշխարհն էր: Քաղաքին մէջ կային կրպակներ եւ բանուկ հինգ շուկաներ, որոնցմէ ամենէն գեղեցիկն ու ճոխը եղած է Հիւսէյն Ալի խանի շուկան: Պետութեան կողմէ նշանակուած էր կշիռներու հսկիչ մը (խանթարբաշի): Կը գործածուէին թրքական, տեղական, բայց մանաւանդ պարսկական, չափեր ու կշիռներ: Հարկահաւաքները կան չափեր ու կշիռներ: Հարկահաւաքները ապրանքներու հարկերը գանձելէ վերջ կը թոյլատրէին անոնց գիւղատնտեսական, արհեստաւորական եւ ներմուծուած ապրանքներու վաճառումը: Սարգարը տնտեսական շահերուն համար կը քաջելէր արտաքին առուտուրը՝ վաճառականներու բնակելով առուտուրը՝ վաճառականներու բնակելով առուտուրը: Սարգարը միջոցներ, արտօնագրեր, ապահովութեան միջոցներ, արտօնագրեր, եւ նմանապէս շինելով ճամբաներ: Կո գանձուէր մաքս բոլոր արտօնութեան մէջ ծուղ ապրանքներէն: Շրջանառութեան մէջ էին բոլոր երկիրներու դրամները, բայց, էին բոլոր երկիրներու դրամները, բայց, էին բոլոր երկիրներու դրամները (էջ 89-139):

Բաւականաչափ ընդարձակ եղած են Երեւանի հողային տարածութիւնները: Անոնց մէկ մասը սարգարին սեփականութիւնն էր: Այդիները կապալով մէկ տարուայ համար կը տրուէին կապալատուին: Երեւանի մէջ ունէր ութ ելմիածնի վանքը Երեւանի մէջ ունէր ութ աղբի, ջրաղացներ եւ ուրիշ կալուածներ: Միւս հողերու եւ կալուածներու տէրերը քաղաքացիներն էին:

Երեւանի խանութեան մէջ գիւղատնտեսական կենսական հարց եղած է հողերու ոռոգումի հարցը: Հիւսէյն խան այս բանը ոռոգումի հարցը: Հիւսէյն խան այս բանը աչքաթող չէ ըրած իր շահին համար: Ոռո-

ղաքի լուսավորութեան համար 1880 թուականին 100 լապտեր կար միայն: Երեւանի բնակչութիւնը շատ տառապած է ջրերի պակասէն եւ անմաքրութենէն, ու առողջապահական միջոցներ չեն առնուած նկատի: Անոր համար 1829-70ական թուականներուն 7-8 անգամ խորերայ տարածուած է եւ քանի մը անգամ ժանտախտ (էջ 514-585):

Նախորդ ժամանակաշրջանի համեմատութեամբ այս շրջանում (ռուսական զրաւումին) Երեւանի կուլտուրան զգալի չափով յառաջադիմում է: Այս տեղ առաջին անգամ ռուսական դպրոցի օրինակով ստեղծում են աշխարհիկ դպրոցներ» (էջ 586): Երեւանի առաջին պետական եւ ժամանակակից կանոնաւոր դպրոցը եղած է Գաւառական դպրոցը (1832ին) որուն տեսուչներէն կ'ըլլայ անմահ Սաչատուր Աբովեան, եւ որ՝ 1868ին կը վերակազմուի «Պրոգրամադիայի»: Երեւանի հայոց հոգեւոր թեմական դպրոցը կը բացուի 1837ին: Օրիորդներու համար վարժարան մը կը հիմնուի 1850ին Ս. Հովհաննէսի անունով, եւ 1866ին Գայեանեան ծխական եւ հոգեւոր ուսումնարանը: Երեւանի մէջ կը պաշտօնավարէ նաեւ մանկավարժ Ղազարոս Աղայեան: Հոն կը բացուին գերմանուհի Ս. Ստանիսլաւի պանսիոնը 1877ին, ընթերցարաններ եւ կը տրուին թատերական ներկայացումներ (Գ. Չմշկեան):

Տխուր է Յակոբեանի վերջին խօսքը — «Սակայն այս բոլորը շատ չնչին էին՝ քաղաքին ընդհանուր զրուծիւնը փոխելու համար: Երեւանը մնում էր որպէս յետամնաց գաւառական քաղաք. թոյլ զարգացած արհեստագործութեան եւ վերջին աստիճանի սահմանափակ ծաւալ ունեցող առեւտրի քաղաք:

մէկ տասնեակ հազարից մի փոքր աւելի բնակչութիւնով: Նա մնում էր մօտ երկու եւ կէս հազար քսենոփոնեան տներէց բաղկացած մի հայկական կոյտ: Այդ կոյտի տարբեր մասերում նոր կառուցուած տները միայն չնչին բծեր էին, որոնք կ'որչում էին համընդհանուր խեղճուկ տեսարանի մէջ: Նրա դպրոցները փոքրաթիւ էին. ցածր տիպի, սովորողներէ թիւը՝ չնչին: Յարական ինքնակալութիւնը իր մենատիրական, նացիոնալիստական եւ գաղութային քաղաքականութեամբ ամէն կերպ խափանում էր, ինչպէս Անդրկովկասի տասնեակ քաղաքներին, այնպէս էլ Երեւանի տնտեսական եւ կուլտուրական զարգացումը» (էջ 585-640):

Ահա թ. Յակոբեանի ընդարձակ գրքին ամփոփումը որ կը խոստովանիմ թէ անբաւարար է: Հեղինակը լուրջ գործ է որ հրապարակ հանած է: Ժիրօրէն օգտագործած է հնարաւոր աղբիւրներ, հրատարակած նկարներ ու պատկերներ: Ուսած է խօսիլ փաստերով, իջնալ մանրամասնութիւններու, առանձն ձանձրանալի ըլլալու: Գրքին վերջաւորութեան տրուած են ուսերէն եւ անդլիէրէն լեզուներով ամփոփումներ (էջ 641-650): Անձնանուններու ցանկ (էջ 651-56): Տեղանուններու եւ բովանդակութեան ցանկ (էջ 657-672):

Թ. Յակոբեան կրնայ սրտի գոհունակութիւնն ունենալ, որ մեր Երեւանի 1801-1879 պատմութիւնը յօրինած է սահուն ու հաճելի ոճով եւ այն՝ այնպէս՝ ինչպէս կարելի էր եւ հարկաւոր:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Ուղարկուած Խմբագրութեան):

Անէմեան Զաւէն Հ., Դարար: Իսթանպուլ 1960, տպ. Յ. Աբրահամեան, 8°, էջ 32:

Անէմեան Հայկ, Յիշատակարան Թեհրանի Հայոց Իսրայէլ Սահակեան ազգային դպրոցի: Թեհրան 1958, տպ. Անի, 8°, էջ 16:

Ամատեան Դովտ. Գ., Աշնան երգեր, քերթութեաներ: Փարիզ 1960, տպ. էլէկեան, 8°, էջ 112:

Անգրիտեան Անդրանիկ, Սպիտակ արգարութիւն: Երեւան, Պետհրատ. 1960, 8°, էջ 374:

Անտոնեան Յակոբ, Բիւրեղներ: Քերթութեաներ, թարգմանութիւններ եւ արձակ էջեր: Պէյրուի 1960, տպ. Սեւան, 8°, էջ 408:

Գալուստեան Հերմինէ, Դէպի անջրպետ: Իսթանպուլ 1960, տպ. A. B. C., 8°, էջ 36: (Մանշր. «Դէպի լոյս» թիւ 6):

Գաիրիմանեան Զ., Դեղին մահիկի տակ: Թեհրան 1946, տպ. Բշարաթ, 8°, էջ 37:

Գեարգեան Կարօ, Ամէնուն Տարեգիրքը: Ը. տարի 1961: Պէյրուի 1960, տպ. Մշակ, 8°, էջ 672:

— Նիւթերու ցանկ ութ հատորներու 1954-1961: Պէյրուի 1960, տպ. Մշակ, 8°, էջ 32:

Գրիգորեան Գր., Հայ ժողովրդական հերոսական էպոսը: Երեւան, Հայ. ՍՍՌ. ԳԱ Հրատ. 1960, 8°, էջ 684:

Զահրատ (Զարեհ Եալուրդեան), Մեծ քաղաքը: Ստանպուլ 1960, տպ. Վարօլ, 8°, էջ 160: (Հրակ. Կեդր. Սանուց Միութեան, թիւ 1):

Զոհրապեան Հ. Կիրեղ, Շարականք, Դատար, Արեւագայի եւ Սաղաղական ժատուց: Վենետիկ Ս. Ղազար, 1960, 8°, էջ 90:

Զորեան Ստ., Երկերի ժողովածու: Երեւան, Պետհրատ. 1960, 8°: Հտր. Ա. էջ 500, Հտր. Բ. էջ 426:

Թումանեան Յովհ., Դիւրբը. (Արեւմտահայերէնի վերածեց՝ Ա. Զիւնպիւլեան): Ստանպուլ 1960, տպ. Վարօլ, 8°, էջ 30: (Մանշր. «Թ» ամսագրի):

— Սասունցի Դաւիթ: Իսթանպուլ, 8°, էջ 46: («Թ» Մանկա-Պատանեկան Մատենաշար թիւ 1):

— Փարանա. (Արեւմտահայերէնի վերածեց՝ Զ. Խրախունի): Ստանպուլ 1960, տպ. Վարօլ, 8°, էջ 16: (Մատենաշար «Թ» ամսագրի):

Իսկանդարեան Իսկանդար, Նմոյշներ: Պարսիկ եւ Եւրոպական գրականութիւնից. թիւ 1. Թեհրան 1955, տպ. Մոգերն, 8°, էջ 119:

Խորխոռունի Վիհակ, Հայր եւ իր քերթ. երգիծական հատընտիր երկերի ժողովածու: Թեհրան 1954, տպ. Մոգերն, 8°, էջ 88:

Խուրիֆէր (Պետ. Տէր-Յովակիմեան), Հեքեթներ եւ աւանդութիւններ. Սեղանի դիրք մեծերի եւ փոքրերի համար: (Գիրք Ա.): Թեհրան 1946, տպ. Մոգերն, 8°, էջ 60:

— Իմաստնալից պատմութեան մեծերի եւ փոքրերի համար: (Բ. Գիրք): Թեհրան 1947, տպ. Մոգերն, 8°, էջ 92:

Հայպետ Եղ., Սեւ-Լիճը, Հէքեթ-պօչմ: Թեհրան 1960, տպ. Ալիք, 8°, էջ 16:

Հիմէթ Ռ. Վ., Քրիստոսի չարչարաքն ու մահը. արդի բժշկութեան գիտական լոյսով: (Թրգմ. Հ. Անդր. Ֆոկալեան): Վենետիկ, Ս. Ղազար 1960, 8°, էջ 130:

Ղազարեան Մանեա, Վարդէս Սուրէնեանց: Երեւան, Պետհրատ. 1960, 8°, էջ 96 + նկարներ:

Ճամպագեան Բիւզանդ, Պատանի կեանքի մը պատմութիւնը: Անթիլիաս 1960, 8°, էջ 50: (Մանշր. Ապրիլեան Եղեռնի, թիւ 4):

Մարտիրոսեան Լեւոն, Համաշխարհային կրօններու մատերիալիստական հիմունքները: Հտ. Ա. Պէյրուի 1960, տպ. Տօնիկեան, 8°, էջ 534:

Յեղափոխական Ալլամ, Տքթ. Արտ. Բարաւան. Գ. Շարք, թիւ 2 (26): Հայէպ 1960, 8°, էջ 33-64:

Յեղափոխական Ալլամ, Ն. Արք. Միլիթ-թանդեան. Գ. Շարք, թիւ (27): Հայէպ 1960, 8°, էջ 65-96:

Յարութիւնեան Սուրէն, Գէորգ Չմշկեան, (Տեսարան եւ հրապարակախօս): Երեւան, Հ. Թատր. Ընկ. Հրակ. 1960, 8°, էջ 104:

Յարութիւնեան Վ. Մ., Միջնադարեան Հայաստանի Քարաւանատները ու կամուրջները: Երեւան, Պետհրատ. 1960, 4°, էջ 148:

Շահումալարեան Ա., Ավեցնան եւ հայ մատենագրութիւնը: Երեւան, Պետհրատ. 1960, 8°, էջ 184:

Շիրվանզատէ, Ծննդեան հարեւրամեակի հանդիսութիւն: Իսթանպուլ 1958, տպ. Վարօլ, 8°, էջ 18: (Հրակ. Եսայեան Սանուց Միութ. թիւ 3):

Շտերնֆելտ Ա., Արհեստական արբանեակներ: Երեւան, Պետ. Գիտ. Տեխ. Հրակ. 1960, 8°, էջ 412: